Ընթացիկ տարվա հունիսի 23-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն« կենտրոնում կայացավ հանդիպում-բանավեճ «Վրացական երազանք՝ հանրապետականներ» խորհրդարանային ֆրակցիայի
նախագահ
,
Սփյուռքի
և
Կովկասի
հարցերով
խորհրդարանային
կոմիտեի
անդամ
,

տարածաշրջանային քաղաքականության և ինքնակառավարման խորհրդարանային կոմիտեի ան
դամ պարոն Դավիթ Բերձենիշվիլու հետ: Հանդիպմանը ներկա էին վիրահայ

մտավորականներ, ոչկառավարական կազմակերպությունների և համայնքային կառույցների ներկայացուցիչներ:

Հանդիպման թեման էր «Վրացական երազանք» կոալիցիայի քաղաքականությունը ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ:

Բացելով հանդիպումը Վիրահայոց Թեմի Առաջնորդի խորհրդական, իրավաբանական բաժնի ղեկավար Լևոն Իսախանյանը անդրադարձ կատարեց Թեմի նախաձեռնությանը՝ երկրի օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ նման հանդիպում-բանավեճերի միջոցով տեղեկանալ ազգային փոքրամասնություններին պատկանող Վրաստանի քաղաքացիների նկատմամբ տարվող քաղաքականության մասին, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչներին իրազեկել նրանց անհանգստացնող խնդիրներին:

Ողջունելով ներկաներին պարոն Դավիթ Բերձենիշվիլին մանրամասն ներկայացրեց «Վրացական երազանք» կոալիցիայի հանրապետական կուսակցության գործունեության, առաջիկա խնդիրների, երկրի ներքին և արտաքին քաղաքականության, Վրաստան-Հայաստանի Հանրապետություն հարաբերությունների տարբեր տեսանկյունները:

Այնուհետև քաղաքական գործիչը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Ախալքալաք-Կարս երկաթգծի շինարարությանը և Հայաստանի խնդրին, Հայոց Ցեղասպանության ճանաչման, բռնագրավված հայկական եկեղեցիները վիրահայ համայնքին վերադարձնելու, հայկական դպրոցները արհեստականորեն փակելու, թբիլիսահայերին իշխանական մարմիններում պաշտոններ չտալու և ընդհանրապես աշխատանքի ընդունելու խնդիրներին:

Հատկանշական է, որ պարոն Բերձենիշվիլին հարցերին պատասխանում էր կոնկրետ մեկնաբանություններով և օբյեկտիվորեն, խուսափելով սին խոստումներից և սուտ արդարացումներից:

Հանդիպումն անցավ հետաքրքիր և փոխըմբռնման մթնոլորտում: Այն լուսաբանվեց վրացական տարբեր լրատվամիջոցներով:

Սա քաղաքական գործիչների հետ Վիրահայ համայնքում կազմակերպված երկրորդ հանդիպումն է: Առաջինը տեղի է ունեցել մայիսի 4-ին, Դավիթ Դարչիաշվիլու հետ:

Հանդիպումների այս շարքը առաջիկայում ևս կշարունակվի: